ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———————— 2016թ. N ------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» N 451-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) Երևան համայնքի սեփականություն համարվող հաշմանդամների տրանսպորտային սպասարկման համար նախատեսված թվով 10 հատուկ վերելակային հարմարանքները՝ 38 450 000 (երեսունութ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը՝ HIGER-KLQ6770G մակնիշի ավտոբուսներով շահագործելու նպատակով.

2) Երևան համայնքի սեփականություն համարվող ավտոբուսներում կանգառների անվանման ավտոմատ հայտարարման թվով 37 սարքերը՝ 4 972 800 (չորս միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը՝ HIGER-KLQ6770G մակնիշի ավտոբուսներում շահագործելու նպատակով։

2.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել նվիրաբերության պայմանագիր։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան համայնքի 2015 թվականի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին, 10.07.2015թ. կնքված N «ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/23» ապրանքների մատակարարման գնման պայմանագրի հիման վրա, «Կամար» ՍՊԸ-ի կողմից ձեռք է բերվել հաշմանդամների տրանսպորտային սպասարկման համար նախատեսված թվով 10 հատուկ վերելակային հարմարանքներ՝ 38 450 000 (երեսունութ միլիոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով։

Երևան համայնքի 2015 թվականի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին, 30.04.2015թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/21 ապրանքների մատակարարման գնման պայմանագրի հիման վրա, «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ձեռք է բերվել ավտոբուսներում կանգառների անվանման ավտոմատ հայտարարման թվով 37 սարքեր՝ 4 972 800 (չորս միլիոն ինը հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով։

Նկատի ունենալով, որ նշված վերելակային հարմարանքները և սարքերը տեղադրվել և շահագործվելու են «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հաշվեկշռում գտնվող չինական HIGER-KLQ6770G մակնիշի ավտոբուսներում, ներկայացվում է սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ